ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

25 դեկտեմբերի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Եսայանին

Հարգելի Գ. Եսայան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի հոկտեմբերի 18-ին կնքվել է **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/24-4** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Ձեր կողմից 23.12.2024թ. ներկայացվել է գրություն, համաձայն որի հրաժարվում եք Պայմանագրի 47-րդ չափաբաժնի մատակարարումից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի դեկտեմբերի 26-ից Պայմանագիրը նշված չափաբաժնի մասով մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **345 (երեք հարյուր քառասունհինգ)** ՀՀ դրամի և **230 (երկու հարյուր երեսուն)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԱՁ Արամ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**